ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԴՐԱԿԱՆ ԵՎ ՆԵԳԱՏԻՎ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Կարեն Ամիրյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ

Իրավունքի տեսության մեջ իրավական պատասխանատվության ընկալման առումով ձևավորվել է երկու հիմնական ուղղություն՝ ավանդական (պատասխանատվություն կատարած արարքի համար) և հետագա (պատասխանատվություն կատարվելիք արարքի համար)[1]: Փորձենք առանձին հետազոտել այդ երկու մոտեցումները: Նախ անդրադառնանք նեգատիվ պատասխանատվությանը: Դրա էության վերաբերյալ մոտեցումները ևս միանշանակ չեն, իսկ որոշ դեպքերում՝ հակադիր են: Այսպես, հեղինակների մի մասը այն մեկնաբանում է որպես իրավունքի նորմի սանկցիայի իրացում: Իրավական պատասխանատվությունը նույն պարտականությունն է, բայց հարկադրաբար իրականացվող, այն դեպքում, երբ իրավունքի սուբյեկտը, ում վրա դրված է տվյալ պարտականությունը, այն կամավոր չի իրացնում[2]: Մի շարք այլ տեսաբաններ իրավական պատասխանատվությունը համարում են խախտված իրավական նորմի համապատասխան սանկցիայի կիրառումը[3], իսկ ոմանք էլ դա դիտում են սեփական գործողությունների համար հաշվետու լինելու պարտականություն: Սակայն, մեր կարծիքով, եթե իրավական պատասխանատվությունը դիտարկվում է հաշվետու լինելու պարտականություն, ապա այն ոչ թե նեգատիվ պատասխանատվություն է, այլ դրական պատասխանատվություն: Որոշ իրավագետներ նեգատիվ պատասխանատվությունը գնահատում են որպես կատարված իրավախախտման համար պատիժ[4]: Մեր համոզումն այն է, որ իրավական պատասխանատվությունն ու պատիժը տարբեր իրավական երևույթներ են, և ոչ մի պարագայում դրանք նույնացնել հնարավոր չէ: Նախ՝ իրավական պատասխանատվության և պատժի ծագման պահերն ինքնին տարբեր են, որն ընդգծում է նաև քրեական օրենսդրությունը: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքում հստակ տարանջատված են քրեական պատասխանատվությունը և պատիժը. ՀՀ քրեական օրենսգրքի 4-րդ բաժնի գլուխներից երկուսն ունեն հետևյալ վերտառությունը. գլուխ 11՝ քրական պատասխանատվությունից ազատելը և գլուխ 12՝ պատժից ազատելը[5]: Այդպես է նաև բազմաթիվ այլ երկրներում, մասնավորապես՝ ՌԴ-ի քրեական օրենսդրությամբ[6]:

---

[1] Տե՛ս Юридическая ответственность должностных лиц в управлении. Научно-аналитический обзор. - М., 1988. – էջ 7:

[2] Տե՛ս **Братусь С.Н.** Юридическая ответственность и законность. - М., 1976, էջ 4:

[3] Տե՛ս **Явич Л.С.** Право и социализм. - М., 1982, էջ 136, Лейст О.Э. Санкции и ответственность по советскому праву. - Л., 1981, էջ 102-103:

[4] Տե՛ս **Иоффе О. С.** Вина и ответственность по советскому праву // Советское государство и право. - 1972. - No 9, էջ 3-39, **Коваль Л.В.** Административно-деликтное отношение. - Киев, 1979, էջ 34; **Мапеин К.С.** Юридическая ответственность и справедливость. - М.: Манускрипт, 1992, էջ 19:

[5] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ՀՀՊՏ 2003.05.02/25(260), ընդունվել է 18.04.2003թ., ուժի մեջ է մտել 01.08.2003թ.:

[6] Տե՛ս Глава 11, 12 УК РФ:

Ըստ մեզ՝ նեգատիվ իրավական պատասխանատվությունը հանրային իրավասու մարմնի կողմից օրենսդրության հիման վրա իրականացվող գործընթաց, պետական հարկադրանքի միջոց և սոցիալական պատասխանատվության տեսակ է, որն ուղղված է ոչ իրավաչափ (որոշ դեպքերում՝ նաև իրավաչափ) վարքագծից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, սահմանադրական կարգը, խաղաղությունը և մարդկության անվտանգությունը, հասարակական կարգը և անվտանգությունը, շրջակա միջավայրը, ինչպես նաև կանխել ոչ իրավաչափ վարքագիծը, արտահայտվում է պետահիշխանական լիազորությունների իրականացման շրջանակներում հակահիրավական վարքագծի համար իրավախախտի պարսավանքով, նրա նկատմամբ որոշակի անբարենպաստ համապատասխան իրավական ներգործության միջոցների կիրառմամբ և իրավախախտի կողմից այդպիսի միջոցների կրմամբ:

Ուստի նեգատիվ իրավական պատասխանատվությանը բնորոշ են հետևյալ գծերը.

- սոցիալական պատասխանատվության տեսակ է,
- իրավական պատասխանատվության տեսակ է,
- անմիջականորեն կապակցված է հանրային իշխանության հետ (այսինքն՝ ինչպես պետական իշխանության, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների հետ),
- ունի երկու հիմնական նպատակ.

ա) անմիջական, այն է՝ ոչ իրավաչափ ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, սահմանադրական կարգը, խաղաղությունը և մարդկության անվտանգությունը, հասարակական կարգը և անվտանգությունը, շրջակա միջավայրը,

բ) միջնորդավորված կամ պրևենտիվ կամ դաստիարակիչ, այն է՝ կանխել ոչ իրավաչափ վարքագիծը,

- իրականացվում է իրավասու մարմնի կողմից և օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով,
- որպես կանոն վրա է հասնում մեղավորությամբ (որոշ դեպքերում՝ նաև առանց մեղքի) կատարած իրավախախտման դեպքում,
- արտահայտվում է իրավախախտի նկատմամբ որոշակի բացասական իրավական ներգործության միջոցների կիրառմամբ,
- ցույց է տալիս հանրային իշխանության, նաև հանրության վերաբերմունքը կատարված իրավախախտման նկատմամբ:

Պետք է նկատի ունենալ, որ իրավական պատասխանատվությունը չի սահմանափակվում լոկ վերջինիս նեգատիվ բնույթով: Այն ներառում է նաև դրական պատասխանատվությունը, ինչի վերաբերյալ տեսության մեջ վերջնական դիրքորոշում դեռևս չի ձևավորվել: Իրավագետների մի մասը այն դիտարկում է որպես իրավական պատասխանատվության մի մաս և հասկանում է որպես հատուկ իրավական հարաբերություն: Դրական պարտականությունը ենթադրում է հասարակության համար կատարել օգտակար գործունեություն, ու որպես հետևանք՝ իրավական պատասխանատվության իրացումը միշտ ենթադրում է իրավական պարտականության կատարում[1]:

Դրական պատասխանատվությունն օգտագործվում է նաև տարբեր իրավական ակտերում, մասնավորապես՝ 1977 թ. ընդունված ԽՍՀՄ Սահմանադրության 3-րդ, 135-րդ, 154-րդ հոդվածներ, ՄԱԿ-ի կանոնադրության 24-րդ, 73-րդ հոդվածներ, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի»

[1] Տե՛ս Назаров Б.Л. О юридическом аспекте позитивной ответственности // Советское государство и право. - 1981. - № 10, էջ 29:

1-ին հոդված, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի» 1-ին հոդված[1], Ճապոնիայի Սահմանադրության 12-րդ հոդված[2]:

Մեր տեսակետն այն է, որ դրական պատասխանատվությունն ունի հանրորեն օգտակար և արժեքավոր բնույթ: Այն կենսագործվում է իրավաչափ վարքագծի տեսքով՝ իրավունքի նորմերով սահմանված պահանջների կատարմամբ, արգելքների պահպանմամբ, նաև իրավասությունից օգտվելով կամ իրավական նորմերի կիրառմամբ: **Ցանկալի կլինի, որ դրական պատասպանատվությունն իրացվի ոչ միայն զուտ իրավաչափ վարքագծի, այլև սոցիալապես ակտիվ իրավաչափ վարքագծի համար: Պետական իշխանության դրական պատասպանատվությունն ամբողջությամբ կարող է դրսևորվել միայն սոցիալապես ակտիվ կամ առավել բնութագրական բնորոշմամբ՝ սոցիալապես պատասխանատու և սահմանադրորեն անհրաժեշտ հանրային-իրավական իրավաչափ վարքագծի տեսքով (գործողությամբ կամ անգործությամբ) այն հիմնավորմամբ, որ միայն վերջինիս պարագայում է, որ իրավասու սուբյեկտը գործում է հանրային, պետական շահը լիովին գիտակցելով:**

Պետական իշխանության դրական պատասխանատվությունը որպես հատկանիշ բնութագրում է պետության սոցիալական էությունը: Հանրային-իրավական պատասխանատվության էությունը պետական իշխանության մարմինների և վերջիններիս պաշտոնատար անձանց հանրային-իրավական այնպիսի վարքագծի ապահովումն է, որը համապատասպանում է իրավական նորմերում սահմանված շահերին: Պետական իշխանության դրական պատասխանատվությունը կարելի է բնորոշել որպես նրանց կողմից Սահմանադրությամբ վավերացրած միջազգային պայմանագրերով և վերաբերելի այլ իրավական ակտերով նախատեսված իրավական նորմերին հետևելու պարտականություն: Սոցիալական հարաբերությունների մեջ գտնվելով՝ պետական իշխանությունը իր վրա պատասխանատվության որոշակի բեռ է վերցնում: Պատասխանատվության հենց այսպիսի ընկալումն է համարվում դրական պատասխանատվություն: Անրաժեշտ է սահմանադրականացնել պետական իշխանության և պաշտոնատար անձանց հանրային-իրավական վարքածիքը, որպեսզի այն բխի սահմանադրական պետության պահանջներից: Դրական պատասխանատվությունը, ի տարբերություն նեգատիվի, ունի մշտական և շարունակական բնույթ: Դրական պատասխանատվությունը կապվում է իրավասու սուբյեկտի կողմից սեփական գործողությունները գիտակցելու, դրանք ղեկավարելու ունակության, ինչպես նաև հանրային-իրավական իրավաչափ վարքագծի դրսևերման հետ:

Դրական իրավական պատասխանատվությունը նորմատիվային է, ունի պարտադիր բնույթ, ապահովված է նեգատիվ իրավական պատասխանատվությամբ: Այն նեգատիվից տարվերվում է նրանով, որ դրական պատասխանատվությունը նախնական է, իսկ նեգատիվը՝ հետագա և որպես կանոն վրա է հասնում դրական պատասխանատվության խախտման դեպքում: Եթե նեգատիվ պատասխանատվությունը պետական հարկադրանքի միջոցներ կիրառելու իրավական գործընթաց է, ապա դրական պատասխանատվության դեպքում պետական հարկադրանքը բացայակում է, և իրավասու սուբյեկտն իր կամքով է կատարում իր պարտականությունները: Դրական պատասխանատվությունը ներքին համոզման վրա հիմնված, պետահիշխանական լիազորությունների շրջանակներում իրականացվող իրավական պարտականություն է, որն իրացվում է իշխանության սոցիալապես ակտիվ իրավաչափ վարքագծում: Պետությունը (պետական իշխանությունը և պաշտոնատար անձինք) հան-

[1] Տե՛ս Մարդու իրավունքների վերաբերյալ ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանգրեր, Պաշտոնական հայերեն թարգմանություն, Փաստաթղթերի ժողովածու, հ. 1, Երևան, էջ 66, 108:

[2] Տե՛ս Конституции зарубежных государства, М., 1999, էջ 443:

ռային-իրավական դրական պատասխանատվություն են կրում՝ կատարել ներպետական և միջազգային-իրավական ակտերով սահմանված վերաբերելի նորմերի պահանջները, պահպանել դրանք, դրսևորել սահմանադրորեն իրավաչափ ակտիվ սոցիալական վարքագիծ: Դրական պատասխանատվությունն իրացվում է իրավական նորմերի պահանջների կատարման, պահպանման, դրանց հետևելու, դրանք օգտագործելու միջոցով և հիմնվում է հանրային-իրավական հարաբերությունների մասնակցի իրավագիտակցության և իրավական մշակույթի վրա:

Դրական պատասխանատվությունը ներառում է նաև հաշվետվողականությունը: Պետական իշխանության դրական պատասխանատվություն ասելով՝ հասկանում ենք պետական իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց պատասխանատու վերաբերմունքն իրենց պարտականությունների նկատմամբ, դրանց ինքնակամ, գիտակցված և արդյունավետ կատարում՝ հիմնված հաշվետվողականության սկզբունքի վրա: Որքան լայն և մեծ են պետական մարմնի լիազորությունները, այնքան մեծ է նաև նրա դրական պատասխանատվությունը:

Դրական պատասխանատվության վերաբերյալ աշխատություններում կա՛մ ընդհանրապես անդրադարձ չի կատարվում այնպիսի հարցերի, ինչպիսիք են դրական պատասխանատվության հիմքերը, իրացումը, սկզբունքները, կա՛մ էլ դրանք կրում են մակերեսային բնույթ և ավելի շատ այդ հարցադրումները քննարկման առարկա դարձնելու նպատակ են հետապնդում: Ներկայացնենք նշված հարցադրումների վերաբերյալ մեր տեսակետները:

Դրական պատասխանատվության հիմքերն իրավական գրականության մեջ առանձին ուսումնասիրման առարկա չեն դարձել, և դրանց վերաբերյալ տեսակետները շատ սուղ են: Կարծիք կա, որ դրական պատասխանատվության համար բավարար է նորմատիվային հիմքը[1], իսկ նեգատիվի ծագման և կիրառության համար անհրաժեշտ են և՛ նորմատիվային, և՛ փաստացի հիմքերը[2]: Համամիտ լինելով այն տեսակետին, որ դրական պատասխանատվության համար բավական է նորմատիվ հիմքը, այնուամենայնիվ գտնում ենք, որ այն ոչ ամբողջական է ներկայացնում դրական պատասխանատվության հիմքերի շրջանակը: Մեր ուսումնասիրությունները հանգում են նրան, որ որպես դրական պատասխանատվության հիմքեր կարող են համարվել հետևյալները.

- իրավական կարգավիճակը: Այս առումով իսկապես լավ է ձևակերված այն միտք, որ «Ես կարող եմ պատասխան տալ միայն այն բանի համար, որին ունենում եմ գիտակցված մասնակցություն: Եվ իմ մասնակցությունը նշանակում է պատասխանատվություն»[3]: Դրական պատասխանատվությունը բխում է սուբյեկտի սոցիալ-իրավական իրական կարգավիճակից և կարող է կոչվել ստատուտային պատասխանատվություն[4],
- իրավական կարգավորվածությունը,
- որոշ դեպքերում՝ նորմատիվ իրավական ակտի ընդունումը (մասնավորապես օրենք) կամ իրավունքի կիրառման ակտը (մասնավորապես Սահմանադրական դատարանի որոշումը):

Իրավագետների մի մասը գտնում է, որ իրավախախտումների համար իրավական պատասխանատվությունը, այսինքն՝ նեգատիվ պատասխանատվությունը տրամաբանական հետևյալ կապակցությունն է՝ իրավունքի նորմ-իրավախախտումսանկցիա, իսկ դրական պատասխանատվությունը՝ իրավունքի նորմ-իրավաչափ վարքագիծ-իրավահարաբերություն: Մեր կարծիքով, դրական պատասխանատ-

---

[1] Տե՛ս **Ապիյան Ն. Ա., Եսայան Ա. Կ.,** Իրավունքի տեսության հիմնահարցեր, ԵՊՀ, 2013, էջ 157:
[2] Տե՛ս **Хачатуров Р. Л., Ягутян Р. Г.,** Юридическая ответственность, Тольятти, 1995, էջ 79:
[3] Տե՛ս **Кон И. С.,** Личность как субъект общественных отношени, М., Знание, 1966, էջ 47:
[4] Տե՛ս **Матузов Н. И., Малько А. В.,** Теория государства и права, М., 2004, էջ 451:

վության կառուցվածքից իրավահարաբերությունը կարելի է բացառել, քանզի այն իրացվում է դրան նախորդող բաղադրատարրում՝ իրավաչափ վարքագծում: Միևնույն ժամանակ այդ կառուցվածքում անհրաժեշտ է ավելացնել այնպիսի տարրեր, ինչպիսիք են իրավական կարգավիճակը, նորմատիվ իրավական ակտը: **Ուստի դրական պատասխանատվության իրացումը կարող է պատկերվել հետևյալ կերպ՝ իրավական կարգավիճակ-իրավական նորմ-իրավաչափ վարքագիծ-ընդունված իրավական ակտ-հաշվետվողականություն:**

Ինչ վերաբերում է դրական պատասխանատվության սկզբունքներին, ապա դրանք են՝

- օրինականությունը, որն ունի մի քանի կողմ: Նախ՝ պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վրա դրվող պարտականությունները պետք է բխեն Սահմանադրությունից, օրենքներից, այսինքն՝ լինեն օրինական, երկրորդ՝ պաշտոնատար անձինք պետք է ճիշտ և միատեսակ կատարեն օրենքի պահանջները, օրենսդրությամբ իրենց առջև դրված պարտականությունը,
- հրապարակայնությունը և հաշվետվողականությունը,
- կամայականության բացառումը և խտրականության արգելքը,
- արդյունավետությունը, այսինքն՝ պետական գործառույթը պետք է իրացնել հնարավորինս քիչ ծախսերով, սակայն ունենալ դրական, ակնկալված արդյունք: Իսկ արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է, որ պետական մարմինների ծրագրանպատակային գործունեությունն իրականացվի իրավականորեն՝ զերծ մնալով քաղաքական հարաբերություններից,
- իրավական ակտերի հիմնավորվածությունը,
- համաչափությունը՝ ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 71-րդ և 78-րդ հոդվածներ[1],
- մարդասիրությունը, այսինքն՝ պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրենց հանրային-իրավական վարքագծում պետք է առաջնորդվեն սահմանադրական այն պահանջով, որ մարդը բարձրագույն արժեք է,
- որոշակիությունը: Համամիտ ենք այն տեսակետին, որ շեշտն իրավական նորմի սանկցիայից պետք է տեղափոխվի նրա դիսպոզիցիայի վրա՝ իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների և պարտականությունների հստակ բնորոշմամբ[2]:

Պետական իշխանության դրական պատասխանատվության հարցը որոշակիորեն փոխկապակցված է կառավարման համակարգի արդյունավետության և հաշվետվողականության հետ, ինչի մասին փաստեցինք սկզբունքների դասակարգման շրջանակում: Հանրային պաշտոնյաներին իշխանությամբ օժտելը ենթադրում է պատասխանատվություն առ այն, որ կապահովվի ռեսուրսների արդյունավետ, օգտակար և հնարավորինս խնայողական կառավարում (այդ թվում՝ հայեցողական լիազորությունների իրացման դեպքերում), ինչպես նաև կբացառվի ռեսուրսների օգտագործում մասնավոր շահի համար: Ինչպես նշվում է, իշխանության արդյունավետությունը մեծապես կախված է նրանից, թե որքան գրագետ է նա օգտագործում սոցիալական պատասխանատվության դրական պոտենցիալը[3]: Պետական իշխանության մարմինների դրական պատասխանատվության մակարդակը, գործունեության արդյունավետությունը բաձրացնելու համար անհրաժեշտ են.

- ներդնել պետական կառավարման համակարգի նկատմամբ հասարակական վերահսկողության գործուն մեխանիզմներ,

---

[1] Տե՛ս Համաչափության վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է արտահայտել ՀՀ Սահմանադրական դատարանը, մասնավորապես ՍԴՈ-649 որոշում:

[2] Տե՛ս **Ապիյան, Ն. Ա., Եսայան Ա. Կ.,** նշվ. աշխ., էջ 102:

[3] Տե՛ս **Панов А. Т.,** Власть и ответственность //Философия, политология, Вестник Саратовского государственного социально-экономического университета, N 3, 2010, էջ 164:

- ապահովել գործունեության ողջամիտ թափանցիկություն և հրապարակայնություն,
- պետական կառավարման համակարգում ներդնել հաշվետվողականության սկզբունքի կենսագործման համար գործուն իրավական կառուցակարգեր (ընդ որում խոսքը վերաբերում է և՛ ներքին, և՛ արտաքին հաշվետվողականությանը),
- ապահովել կադրերի պրոֆեսիոնալիզմն ու մասնագիտական, կրթական որակների շարունակական զարգացումը,
- նախատեսել խրախուսական կարգավորումներ պարտականությունները բարեխիղճ և լիարժեք կատարելու համար՝ կրթական, վերապատրաստման հնարավորություններ նախատեսելով, պարգևավճարներ տրամադրելով և այլն,
- պետական իշխանության բոլոր մարմինների, պաշտոնատար անձանց համար մշակել գործունեության արդյունավետության գնահատման կոնկրետ, հստակ չափանիշներ:

Հանրային իշխանության արդյունավետ իրականացման համար չափազանց կարևոր են անհատ-հասարակություն-պետություն եռամիասնության ճիշտ ներդաշնակումը, շահերի համատեղումը և իրավունքների ու պարտականությունների համաչափ, հավասարակշռված բաշխումը: Անհրաժեշտ է սահմանադրական մակարդակում ապահովել, օրենսդրական մակարդակում երաշխավորել և իրավակիրառ պրակտիկայում իրացնել պետական իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց հանրային-իրավական պատասխանատվությունը: Անհրաժեշտ է նաև հստակեցնել նրանց գործառույթները, լիազորությունները, սահմանել նրանց գործունեության վերաբերյալ հաշվետվողականության ամբողջական համակարգ: Միայն այդ դեպքում կարող ենք խոսել այն մասին, որ պետական իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք կրում են հանրային-իրավական համարժեք պատասխանատվություն: Պետական իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց հանրային-իրավական վարքագիծը պետք է ներառի դրական պատասխանատվության գիտակցումը: Պետական իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց՝ հանրային-իրավական պատասխանատվության համակարգի արդյունավետ գործունակության ապահովման տեսանկյունից ներկայումս հրատապ խնդիր են դառնում սահմանադրական մշտադիտարկման ինստիտուտի ներդրումը և դրա ողջամիտ իրացումը[1]: Չափազանց կարևոր է սահմանադրական պատասխանատվության գործուն համակարգի առկայությունը, որի բացահայտմանն ու գնահատմանն է ուղղված սահմանադրական մշտադիտարկման գործուն համակարգի առկայությունը[2]: Սահմանադրական մշտադիտարկումը յուրահատուկ ազդակի դեր է կատարում՝ միտված մատնացույց անելու կառավարման համակարգում պետության գործառույթային թերացումները, համակարգային արատները: Freedom House կազմակերպությունը հրապարակել է զեկույց, որտեղ բալային սանդղակով գնահատվել են պետություններում մարդու իրավունքների ինդեքսը՝ պետությունները դասակարգելով երեք խմբերի՝ ազատ, կիսաազատ, անազատ: 195 պետություններից 2016 թ. համար 85-ը գնահատվել է ազատ, 57-ը՝ կիսաազատ և մնացյալ 53-ը՝ անազատ: 100 բալանոց սանդղակով Հայաստանը 46 բալով

[1] Այս հարցի շուրջ առավել մանրամասն տե՛ս, մասնավորապես, **Г. Арутюнян**, Перспективы конституционного мониторинга на основе «Контрольного списка верховенства права», Конституционное правосудие, 2 (72) 2016, էջ 60-80, **Г. Саргсян , Р. Геворгян, Н. Кочинян**, Конституционная диагностика на основе сравнительного анализа характеристик демократического развития стран с переходной экономикой// Конституционное правосудие, 2 (72), 2016, էջ 81-98,

[2] Տե՛ս **Հարությունյան Գ.,** Սահմանադրական մշտադիտարկումը որպես սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարման երաշխիք (հայեցակարգային մոտեցումներ), զեկույց Երևանյան միջազգային խորհրդաժողովում, 21 հոկտեմբերի 2016թ., էջ 8:

կիսաազատ երկրների շարքին է դասվել[1]: Մեկ այլ ուսումնասիրության արդյունք ևս: Խոսքը վերաբերում է մարդկային պոտենցիալի զարգացման ինդեքսին, որը կազմել է ՄԱԿ-ը: Այն ունի երեք հիմնական բաղկացուցիչ՝ բարեկեցություն, իրավունքների և հնարավորությունների ընդլայնում, արդարություն: Համաձայն այդ զեկույցի՝ 188 պետություններից 49-ը համարվում են մարդկային պոտենցիալի զարգացման շատ բարձր ինդեքս ունեցող, 56-ը՝ բարձր, 38-ը՝ միջին, 43-ը՝ ցածր: Հայաստանը 0-ից 1-ի միջակայքում 0,733 արդյունքով բարձր ինդեքս ունեցող երկրների շարքին է դասվել[2]: Ներկայացվածները միայն հատվածական մասն են նման հետազոտությունների ողջ ծավալի: Սակայն այս պատկերն էլ բավական է փաստելու, որ պետությունները դեռևս երկար ճանապարհ ունեն ացնելու հանրային-իրավական դրական պատասխանատվության լիարժեք ընկալման և իրացման ճանապարհին: Ամենևին չթերագնահատելով նեգատիվ պատասխանատվության նշանակությունը մարդու իրավունքների պաշտպանության, խախտված իրավունքների վերականգնման հարցերում՝ չպետք է այն բացարձակացնել: Հակառակ պարագայում մեր պատկերացումները չափազանց կսահմանափակվեն իրավական պատասխանատվության բավականին բարդ և բազմերանգ իրավական երևույթի մասին: Ավելին, հասունացել է պահը նեգատիվ պատասխանատվությունից դեպի դրական պատասխանատվության հավասարակշռված անցման:

ПОЗИТИВНЫЕ И НЕГАТИВНЫЕ ПРОЯВЛЕНИЯ ПУБЛИЧНО-ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ

Карен Амирян
Аспирант кафедры теории и истории государства и права ЕГУ

Целью данной работы является выявление двух компонентов публично-правовоой ответственности: позитивная правовая ответственность и негативная правовая ответственность. Научно определены понятия позитивно-правовой и негативно-правовой ответственности.

В характеризаторах позитивно-правовой ответственности выдвинута и подчеркнута идея, что было бы желательно, чтобы позитивная ответственность реализовалась не только в виде правомерного поведения, но и в виде социально активного правомерного поведения. Позитивная ответственность государственной власти в своей целостности может проявляеться только в виде социально активного или, более подробно, в виде социально ответственного и конституционно необходимого публично-правового прамерного поведения (действия или бездействия) тем обоснованием, что лишь в случае последнего компетентный субъект действует полностью осознавая публичный, государственный интерес.

[1] Տե՛ս http://gtmarket.ru/ratings/freedom-the-world/info, https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2016

[2] Տե՛ս http://hdr.undp.org/en/2016-report, http://gtmarket.ru/ratings/human-development-index/human-development-index-info

Предметом отдельного исследования стали также общность и различия позитивно-правовой и негативно-правовой ответственностей, уточнены и по-новому истолкованы основания и принципы позитивной ответственности. Кроме этого, позитивная правовая ответственность рассмотрена в свете принципа подотчетности, которая в свою очередь является составной частью реализации позитивно-правовой ответственности. Нами четко представлен процесс реализации позитивно-правовой ответственности, закрепляя его следующим образом: правовой статус-правовая норма-правомерное поведение-принятый правовой акт-подотчетность.

POSITIVE AND NEGATIVE MANIFESTATIONS OF PUBLIC LEGAL RESPONSIBILITY OF THE STATE

Karen Amiryan
PhD Student of the YSU Chair of Theory and History of State and Law

---

The purpose of this work is to identify two components of public legal responsibility, i.e. positive legal responsibility and negative legal responsibility. The concepts of positive legal responsibility and negative legal responsibility are scientifically defined.

In the indicators of positive legal responsibility, the idea was put forward and emphasized that it would be desirable that positive responsibility be realized not only by way of legitimate behavior, but also by way of socially active legitimate behavior. In its totality, positive responsibility of the State may only be manifested by way of socially active or, in more detail, by way of socially responsible and constitutionally necessary public legal legitimate behavior (action or inaction) on the ground that the competent entity fully recognizes the public and State interest only in the presence of the latter.

The author also studied the commonality and differences of positive legal and negative legal responsibilities, as well as clarified and reinterpreted the grounds and principles of positive responsibility. In addition, positive legal responsibility was considered in the light of the principle of accountability, which in turn is an integral part of the implementation of positive legal responsibility. The process of implementing positive legal responsibility was clearly indicated, and it was defined as follows: legal status-legal norm-legitimate behavior-adopted legal act-accountability.

Բանալի բառեր – *պատասխանատվություն, իրավական պատասխանատվություն, հանրային-իրավական պատասխանատվություն, դրական պատասխանատվություն, նեգատիվ պատասխանատվություն*
Ключевые слова: *ответственность, правовая ответственность, публично-правовая ответственность, позитивная ответственность, негативная ответственность*
Key words: *responsibility, legal responsibility, public legal responsibility, positive responsibility, negative responsibility*